«ԳԱՐԳԱՐԱՑԻՈՑ ԴԱՇՏԻ» ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Գարգարացւոց դաշտը» առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին՝ Տրդատի գլխավորած հայոց զորքերի և «հյուսիսականների» բախումը նկարագրող հետևյալ հատվածում. «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանօք իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. և ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկուս ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայաբար շահատակելով։ Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալագլոր խազային, օրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թօթափեալ ցանցոյն կայտռէին յերեսս Երկրին։ Զոր տեսեալ թագաւորին Բասլաց՝ մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպազինէն զներդեալ քեմխտապատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռնն ածել ումեք սուսերաւ. եւ ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք։ Եւ քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զհսկայն՝ զլանջօք առ երիվարին. և ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ սկային, և սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ ի ճահ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն և զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարին։

Իսկ զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջապտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային. զորոց ցհետ մտեալ Տրդատ, վարէ մինչև յաշխարհն Հոնաց»[1]։

Քանի որ, խնդրո առարկա դաշտի տեղադրության պարզաբանման գործում ոչ երկրորդական դեր է վերապահված հիշյալ ճակատամարտին, ուստի, նախ տեսնենք, թե ի՞նչ հանգամանքներում է մղվել այն։ Հովսեպոս Փլավիոսը, ալանների գլխավորությամբ «հյուսիսականների» Ատրպատական ձեռնարկած 72 թ. (մ. թ.) արշավանքի մասին խոսելիս[2], *տալիս է այս նույն ճակատամարտի մեկ ուրիշ նկարագրություն*[3]. *«(Ալանները)... միահամուռ հարձակվե-*

---

[1] *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 230—231։*

[2] Josephus Flavius, Bellum Judicum, VII, 7, 4.

[3] Г. Халатянц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, М., 1896, стр. 242—244; его же, «Очерк истории древней Армении», М., 1910, стр. 292—296; Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 432—433, *Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 354—355, Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 214, Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 357—358, ծան. 152,* М. Артамонов, Очерки древнейшей истории хазар, Л., 1936, стр. 121—122. *Մովսես Խորենացու կարծիքով, այս ճակատամարտը մղողը եղել է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակած Տրդատ արքան։ Իրականում, ինչպես ցույց է տրված թվարկված աշխատություններում, խոսքն այստեղ ոչ թե Տրդատ Գ-ի (մոտ. 298—330 թթ.), այլ Տրդատ Ա-ի (54—80 թթ., օրինական՝*

ցին մեդացիների վրա, ավարի առան բազմամարդ երկիրը, որ լի էր ամեն տեսակ անասուններով. և ոչ ոք չհամարձակվեց նրանց դիմադրել, որովհետև այս երկրի Բակուր թագավորը սարսափած փախել էր դժվարամատույց տեղեր, թողնելով բոլոր մյուսներին բախտի քմահաճույքին։ Հաղիվհազ նա կարողացավ ազատել նրանց ձեռից կնոջը և հարճերին, որ գերի էին բռնված՝ վճարելով հարյուր տաղանդ։ Ալանները մեծ հեշտությամբ ու առանց կռվի կողոպուտի մատնեցին երկիրը մինչև Հայաստան և հեռացան՝ վերցնելով իրենց հետ ամբողջ ավարը։ Հայաստանում թագավորում էր Տրդատը, որը ոազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց և քիչ էր մնում, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը գերի ընկներ կենդանի։ Ալաններից մեկը հեռվից պարան ձգեց նրա վրա և նրան արդեն բռնելու էր, սակայն Տրդատն իսկույն իր սրով պարանը կտրեց և շտապ փախավ»[4]։

Հայագիտության մեջ ընդունված տեղադրության համաձայն, «Գարգարացոց դաշտը» գրավում էր Կուր-Արաքսյան գետախառնուրդի շրջանի այսրկուրյան և այսրարաքսյան մասը կազմող այն եռանկյունաձև հարթությունը (մերթ նեղ, մերթ ավելի լայն ընդգրկմամբ), որն այժմ հայտնի է Միլի դաշտ (Միլի հարթավայր) անվամբ[5]։ Արդ, տեսնենք, թե «Գարգարացոց դաշտի» նման տեղադրությունը համապատասխանում է արդյո՞ք 72 թ. հայ-«հյուսիսական» ճակատամարտի վերաբերյալ երկու նկարագրությունների համադրումից պարզվող պատկերին։

Ճակատամարտն, ըստ Փլավիոսի, տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ Ատրպատականից դուրս գալով՝ ավարով ծանրաբեռնված «հյուսիսական» հրոսակախմբերը բռնել էին տունդարձի ճանապարհը և մտել Հայաստան։ Նշանակում է, ճակատամարտի վայր հանդիսացած «Գարգարացոց դաշտը» գտնվելու էր Հայաստանի այն մասում, որտեղից հեռու չէին Ատրպատականի սահմանները։

•Մեր պատմահայրը երիցս նշում է, որ «հյուսիսականներին» հանդիպելու համար (իսկ հանդիպումը, ինչպես տեսանք, կայացել էր «Գարգարացոց դաշտում») Տրդատն իր զորքերով ուղևորվել էր «զկողմամբք Աղուանից»[6]։ Նշանակում է, «Գարգարացոց դաշտը»՝ ճակատամարտի վայրը, գտնվում էր Հայաստանի այն մասում, որտեղից հեռու չէին նաև Աղվանքի սահմանները։

66-ից) մասին է։ Թյուրիմացության պատճառն այն է, որ Խորենացուն հայտնի էր Տրդատ կոչված հայոց արքաներից միայն մեկը՝ Տրդատ Գ, որի շուրջ նա համախմբել է մյուս Տրդատներին վերաբերող տեղեկությունները։

4 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 9—10։

5 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, թարգմ. Բ. Պիլեզիկեյան, Վիեննա, 1907, էջ 111—112, Н. Адонц. նշվ. աշխ., էջ 424, Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 46, նույնի. «Աշխարհացույց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ» («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 266, ծան. 51)։ Ն. Ադոնցը, հենվելով Թովմա Արծրունու այն հաղորդման վրա, թե արաբական զորավար Բուղան «իջանէ ի դաշտ Գարգարացոց և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ» (Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս, 1917, էջ 290), ենթադրում էր, որ երբեմն «Գարգարացոց դաշտի» մեջ է դրվել նաև բուն Ուտիքը՝ Պարտավի շրջակայքը (նշվ. աշխ., էջ 424, ծան. 2)։

6 «Եւ ի խաղալ թագաւորին զկողմամբք Աղուանից ի վերայ հիւսիսականացն՝ գնաց Մամգոն ամենայն աղխիւն իւրով զկողմամբք Տարօնոյ, որպէս թէ ապստամբեալ ի թագաւորէն.

Ըստ Խորենացու, հայոց զորքերը «հյուսիսականներին» հաղթելով՝ հալածել էին «մինչեւ յաշխարհն Հոնաց»[7]։ Նրա ժամանակաշրջանում «աշխարհն Հոնաց» կոչվում էր այժմյան Դաղստանի Դերբենդից հյուսիս ընկած տարածքը[8]։ Այս հանգամանքը թույլ է տալիս պնդելու, որ Ատրպատականից հեռանալուց և հայոց զորքերի հետ ընդհարվելուց հետո «հյուսիսականները» հայրենիք՝ Հյուսիսային Կովկաս, վերադարձել են Արևելյան Անդրկովկասի մերձկասպյան շրջանների վրայով։ Նշանակում է, ճակատամարտի վայր ճանաչված «Գարգարացւոց դաշտը» գտնվել է Հայաստանի մերձատրպատականյան և մերձալվանքյան այն մասում, որի վրայով էր անցնում Ատրպատականից Դերբենդ տանող հին ճանապարհը։

Արևելյան Անդրկովկասի մերձկասպյան շրջանների վրայով Ատրպատականից Դերբենդ տանող հին ճանապարհի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան արաբական մատենագիրների (Ալ-Իստահրի, Իբն-Խորդադբե, Իբն-Հաուկալ, Ալ-Մուկադդասի, Կուդամա և այլք) երկերում։ Դրանցից պարզվում է, որ արևելյանդրկովկասյան-մերձկասպյան ճանապարհի հարավային հատվածը հյուսիս-արևելյան Ատրպատականից Բարդանդի, Բալխաբի և Վարտանի (Վարդանակերտ) վրայով, կտրել-անցնելով Արաքսը, մտնում էր այժմյան Միլի դաշտում գտնվող Բայլական (Փայտակարան) բնակավայրը։ Այստեղ նրանից անջատվում էր Բարդաայի (Պարտավ) վրայով և Կուրի աջափնյակով դեպի Թիֆլիս տանող ճանապարհը։ Արևելյանդրկովկասյան-մերձկասպյան ճանապարհի հյուսիսային հատվածը նույն Միլի դաշտից, Կուրի ծանծաղուտով, անցնում էր նրա ձախափնյակը, ապա Շամախի, Շարվան (Շաբարան), Աբխազ և Ջասար-Սամուր (Մուզքթաց երկրում) բնակավայրերի վրայով հասնում էր Բաբ ուլ-Աբվաբ (Դերբենդ)[9]։ Ինչպես տեսնում ենք, արևելյանդրկովկասյան-մերձկասպյան ճանապարհի հարավային և հյուսիսային հատվածները միմյանց կամրջվում էին այժմյան Միլի դաշտում, որն այն ժամանակ (72 թ.) Մեծ Հայքի տարածքի մասն էր կազմում։

Այսպիսով, Միլի հարթավայրն իր տեղադրությամբ բավարարում է այն բոլոր պահանջները, որոնք, բխեցնելով Հովսեպոս Փլավիոսի ու Մովսես Խորենացու 72 թ. հայ-«հյուսիսական» ճակատամարտի մասին արած հաղորդումներից, կարող ենք առաջադրել որպես այդ ճակատամարտի վայր։ Պարզենք մեր միտքը. Միլի հարթավայրը գտնվում էր հենց «հյուսիսականների»

և ի չոր անկեալ, առաքէ գաղտագնաց հետևակս, զգացուցանելով նահապետի ազգին Սկիւնեաց զգնալն թագաւորին զկողմամբք Աղուանից. «Վտանգ մեծ է, ասէ, թագաւորին Տրդատայ, վասն որոյ գնաց զկողմամբք Աղուանից պատերազմել ընդ ամենայն լեռնոտնեայսն»— գրում է Խորենացին՝ Տրդատի կողմից Մամիկոնյանների նախնու Տարոն ուղարկվելու կապակցությամբ (Խորենացի, էջ 228—229)։

7 Խորենացի, էջ 231։ Այս հաղորդումը կարող է և չհամապատասխանել իրականությանը, բայց, ամեն դեպքում, ցույց է տալիս, որ «հյուսիսականներին» տունդարձի ճանապարհի վերջնակետը Հոնաց աշխարհն էր։

8 М. Артамонов, Очерки древнейшей истории хазар, Л., 1936, стр. 64—78, 90, 186, Я. Феодоров, Хазария и Дагестан («Кавказский этнографический сборник», т. V, М., 1972, стр. 18—40).

9 Н. Караулов, Сборник сведений арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX, Тифлис, 1901, стр. 29—31, вып. XXXII, 1902, стр. 9—13, 25—27, вып. XXXVIII, 1907, стр. 17, 101); Hudūd al-'Ālam, The Regions of the World. Transl. and explained by V. Minorsky, London, 1937, pp. 390—405.

տունդարձի արևելաանդրկովկասյան–մերձկասպյան ճանապարհի վրա և հին Հայաստանի հիշտ այն մասում, որտեղից հեռու չէին ինչպես Ատրպատականի, այնպես էլ Աղվանքի սահմանները։ Ուրեմն, Խորենացու կողմից որպես 72 թ. հայ-«հյուսիսական» ճակատամարտի վայր ցույց տրված «Գարգարացւոց դաշտը», իսկապես, համապատասխանում է այժմյան Միլի հարթավայրին։

Փորձեր են արվել (և արվում են) «Գարգարացւոց դաշտը» տեղադրելու ոչ թե այժմյան Միլի հարթավայրում, այլ պատմական Գուգարքի տարածքում։ Վ. Առաքելյանը Տրդատի գլխավորած հայոց զորքերի և «հյուսիսականների» միջև մղված ճակատամարտի վայրի «Գարգարացւոց դաշտում» գտնվելու վերաբերյալ գրում է. «Գարգարացոց» այստեղ «Գուգարացոց» ձևի աղավաղումն է... Գարգարացոց դաշտը գտնվում է պատմական Գուգարքում»[10]։

«Գարգարացւոց դաշտի» նման տեղագրումը՝ հիմնված միմիայն «Գարգարացւոցը» «Գուգարացվոցի» աղավաղյալ ձևն համարող տեսակետի վրա[11], անընդունելի է, թեկուզև, հետևյալ պատճառներով։

1. Ի տարբերություն գուգար(ացի) և գարգար(ացի) ձևերը շփոթող մեր պատմիչների երկերի մի շարք հրատարակությունների[12], Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական հրատարակությունը հստակորեն զատորոշում է դրանք։ Իսկ, ինչպես տեսանք, վերջինիցս քաղված վերոբերյալ հատվածում առկա էր հենց «Գարգարացւոց» և ոչ թե «Գուգարացւոց» ձևը։

2. Թե՛ Մովսես Խորենացու, թե՛ տվյալ դեպքում նրան կրկնող Մովսես Կաղանկատվացու հաղորդումները «Գարգարացւոց դաշտը» Գուգարքում տեղագրելու համար ոչ մի հիմք չեն տալիս։ Ավելին, ինչպես տեսանք, ըստ Խորենացու, այն գտնվում էր հին Հայաստանի՝ Աղվանքին (հիշենք. «զգնալն թագաւորին զկողմամբք Աղուանից») և ոչ թե Վիրքին (որը կլիներ Գուգարքի դեպքում) հարող մասում։

---

10 Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 278, ծան. 83։

11 Հ. Համբարյան, Գարգարացի՞ք թէ՞ գուգարացիք («Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 241—242)։

12 Դրանք արտացոլում են մատյաններում հաճախակի հանդիպող նույնատիպ շփոթը։ Բերենք մի քանի օրինակներ. ա) «... իշխանն Գարգարացւոց աշխարհին՝ որ միւս անուանեալ բդեաշխն...» («Ագաթանգեղայ Պատմութիւն», Վենետիկ, 1862, էջ 579)։ Բդեշխ տիտղոսն արդեն հուշում է, որ այստեղ պետք է լիներ «Գուգարացւոց»՝ «Գարգարացւոց»-ի փոխարեն։ բ) «(Մագքթաց Սանեսան արքան) ...գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց և Գղուարաց, Գուգարաց, Շչբաց և Ճղբաց և Բաղասճաց և Ծգերսուանացն, և այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց։ Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին» («Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 24)։ Անտարակույս, «հյուսիսական» այս ցեղերի շարքում կարող էին գտնվել ոչ թե Գուգարքի բնակիչները, այլ դրանց հարևան հյուսիսկովկասյան գարգարները։ Ուրեմն, «Գուգարաց»-ն այստեղ ուղղելի է «Գարգարաց»։ գ) «Անդ ապա մեծ քորեպիսկոպոսն, որ պայազատէր իսկ զմասն Գուգարայ մերձ ի Դրունս Ալանաց՝ գայր հասանէր զօրու բազմաւ ի թիկունս օգնականութեան թագաւորին» («Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 301)։ Կախեթի տիրակալին վերաբերող այս տողերում «Գուգարացը» ուղղելի է «Գարգարաց», քանի որ ակնարկվում է հյուսիսկովկասյան գարգարների երկիրը (ոչ թե Գուգարքը, այլ վերջինս էր գտնվում «մերձ ի Դրունս Ալանաց»)։

3. «Գարգարացւոց դաշտը» Գուգարքում՝ հին Հայաստանի ամենահյուսիսային այդ նահանգում գտնվել չէր կարող։ Հակառակ դեպքում, դուրս է գալիս, որ ավարով ծանրաբեռնված «հյուսիսական» հրոսակախմբերը ընտրել էին տունդարձի երկար ու վտանգներով լի մի ճանապարհ՝ կտրել-անցնելով Հայաստանի տարածքը՝ սկսած նրա հարավ-արևելյան, Ատրպատականին սահմանակից, շրջաններից մինչև ամենահյուսիսայինները Գուգարքում (չհաշված և այն, որ Հյուսիսային Կովկաս հասնելու համար, այնուհետև, նրանք պետք է կտրեին-անցնեին նաև Վիրքի տարածքը)։ Եվ այդ ամենը տեղի էր ունենալու բուն Հայաստանի հայ բնակչության միջավայրում հայոց զորքերին հանդիպելու կամ նրանից, նրա իսկ տարածքում հետապնդվելու վտանգի տակ։ Իրականում, հայրենիք վերադարձող «հյուսիսականներն» ընտրել էին ամենակարճ և համեմատաբար ապահով արևելաանդրկովկասյան-մերձկասպյան ճանապարհը, որը և Դերբենդի վրայով նրանց հասցրել էր հայրենիք՝ «աշխարհն Հոնաց»։

4. «Գարգարացւոց դաշտը» Գուգարքում գտնվել չէր կարող նաև հետևյալ պատճառով։ «Հյուսիսականների» Ատրպատական ներխուժելուց հետո Տրդատն, անտարակույս, տեղեկացվել էր հայ կամ ատրպատականցի (վերջիններիս Բակուր թագավորը Տրդատի եղբայրն էր) գուժկանների կողմից։ Նշանակում է, մինչ «հյուսիսականներն» ասպատակում էին Ատրպատականը, Տրդատը ժամանակ ուներ մարտական վիճակի բերելու իր զորքերը (եթե ոչ ամբողջը, գոնե արքունի բանակն ու որոշ լրացուցիչ ստորաբաժանումներ) և մեկնելու արևելք՝ «հյուսիսականների» ետդարձի ճանապարհը փակելու և հափշտակված ավարն ու գերիները ետ առնելու մտադրությամբ։ Տեսանք, որ նա հենց այդպես էլ վարվել էր՝ նրանց հանդիպելով և ճակատամարտ տալով Ատրպատականի սահմաններից ոչ հեռու գտնվող «Գարգարացւոց դաշտում»։ Հակառակն ընդունելիս կստացվեր, որ Ատրպատականից վերադարձող «հյուսիսականներին» հայոց թագավորն իր զորքերով սպասել էր Հայաստանի ոչ թե մերձատրպատականյան վայրերում, այլ ծայր հյուսիսում՝ թույլ տալով, որ նրանք հարավ-արևելքից հյուսիս ուղղությամբ հատելով Հայաստանը, հասնեին Գուգարք։

«Գարգարացւոց դաշտի» ընդունված տեղադրության (Միլի հարթավայրում) ճշմարտացիությունը հաստատվում է ո՛չ միայն 72 թ. հայ-«հյուսիսական» ճակատամարտի շուրջ ծավալված դեպքերի քննության և դրանց միջավայրերի բացահայտման շնորհիվ, այլ նաև Մովսես Խորենացու այն վկայություններով, որոնցից առաջինի մեջ ակնարկված է «Գարգարացւոց իշխանությունը», իսկ երկրորդում՝ «Գարգարացւոց լեզուն»։ Ահա այդ վկայություններից առաջինը.

«(Վաղարշակը)... զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ։ Ի սորա

զաւակաց տանն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնսն»[13]։

Բերված հատվածից պարզվում է, որ, Խորենացու պատկերացմամբ, Արշակունի արքայատոհմի հայկական ճյուղի հիմնադիր ավանդական Վաղարշակը «զարեւելից հիւսիսոյ կողմանն» Հայաստան աշխարհի ստեղծել էր մի կողմնակալություն և այնտեղ կողմնակալ կարգել Սիսական Առանին։ Փաստորեն այս Առանը ավանդական գեմք է՝ լինելով բանահյուսական անձնավորումը հարթավայրային Առան շրջանում («դաշտն Աղուանից») և արևմուտքից նրան հարող լեռնաստանում («լեռնակողմն նորին դաշտի») Տրդատ Ա-ի[14] կողմից նշանակված հայ կողմնակալների։ Իսկ այդ կողմնակալները, ինչպես կարելի է բիմացնել Խորենացու հաջորդ տողերից, չորսն էին՝ «Ուտէացւոց», «Գարդմանացւոց», «Ծաւդէացւոց» և «Գարգարացւոց»։

Մովսես Խորենացու հետևությամբ, Առանի կողմնակալության (ավելի ճիշտ՝ կողմնակալությունների) զբաղեցրած տարածքը կարող ենք հասցնել արևմուտքում մինչև Սյունիք ու Սևանա լիճ, հյուսիսում մինչև Հնարակերտ, հյուսիս-արևելքում և արևելքում՝ Կուր, հարավում՝ Արաքս։ Այս նույն տարածքում էլ իշխել են ավանդական Առան կողմնակալից սերած համարվող թվարկված հին հայկական նախարարական տոհմերը։ Անկասկած է, որ սրանցից «Ուտէացւոց» կոչվածն իշխել է հիշյալ տարածքի արևելյան մասում՝ բուն Ուտիքում, «Գարդմանացւոցը»՝ հյուսիսն ընդգրկած Գարդման-Շակաշենում, «Ծաւդէացւոցը»՝ արևմտյան և հարավ-արևմտյան մասերը բռնած Ծավդեքում։ Մնում է հիշյալ տարածքի հարավ-արևելքը՝ Կուր-Արաքսյան գետախառնուրդի շրջանի այսրկուրյան և այսրարաքսյան մասը (այսինքն՝ այժմյան Միլի հարթավայրը), որտեղ և իշխելու էր «Գարգարացւոց» կոչված հին հայկական նախարարական տոհմը։

Բ. Ուլուբաբյանն առաջարկում է հրաժարվել «Գարգարացւոց իշխանութեան». այսպիսի տեղադրությունից, քանի որ Խորենացու երկի վերոբերյալ հատվածում, նրա կարծիքով, «խոսքը վերաբերում է Գուգարքին»[15]։ Սակայն, բանն այն է, որ «Գարգարացւոց» ձևն է առկա Խորենացու երկի գիտական հրատարակության մեջ, և ճիշտ այն նույն գլխում (Բ, ը), որտեղ առանձին հանդիպում է նաև «Գուգարացւոց» ձևը։ Ընդ որում, նույն այդ գլխում Խորենացին բերում է ոչ միայն «Գարգարացւոց» իշխանների, այլև «Գուգարացւոց» բդեշխների թե՛ տոհմաբանությունը և թե՛ տեղադրությունը։

«Գուգարացւոց» բդեշխական տոհմի հիմնադրի վերաբերյալ Խորենացին հաղորդում է հետևյալը. «Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ (Վաղարշակը—Ս. Պ.)

---

13 Խորենացի, էջ 113։

14 Արշակունի արքայատոհմի հայկական ճյուղի հիմնադիրն համարված Վաղարշակը ավանդական գեմք լինելով հանդերձ՝ պահել է իր իրական նախատիպ Տրդատ Ա-ի բնորոշ գծերը։ Դա հատկապես ակնառու է Խորենացու երկի այն դրվագներում, որոնց մեջ Վաղարշակն իրեն դրսևորում է որպես նախաձեռնող պետական կարևորություն ունեցող մի շարք բարեփոխումների (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 432—433, Կ. Բասմաջյան, Իսկական պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 100—102, Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. Ա, Երևան, 1939, էջ 181, 264, 328, «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, Երևան, 1971, էջ 791, ծան. 103)։

15 Բ. Ա. Ուլուբաբյան, «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ 121, ծան. 36), նույնի «Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ» («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 186)։

կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բդեշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի. զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ դերութեանն ի Վերիացւոց աղգացն...»[16], Ինչպես տեսնում ենք, Գուգարաց բդեշխներին մեր պատմիչը սերած է համարում ոչ թե Սիսական Առանից, և իշխող ոչ թե Հայաստանի հյուսիս-արևելքում (ինչպես «Գարգարացւոց» իշխանների դեպքում է), այլ սերած Դարեհի Միհրդատ նախարարից, և իշխող Հայաստանի ծայր հյուսիսում՝ Վիրք-Իբերիային սահմանակից Գուգարքում։ Ուրեմն, այստեղ որևէ շփոթ գոյություն չունի։ Մովսես Խորենացին խոսում է տարբեր (թե՛ ծագման, թե՛ բնակության տեսակետից) հին հայկական տոհմերի՝ մի դեպքում հայկազն «Գարգարացւոց» իշխանների[17], մյուսում՝ օտարածին (իրանակա՞ն ծագմամբ) «Գուգարացւոց» բդեշխների մասին։ Այսպիսով, «Գարգարացւոց իշխանութիւնը» տեղ չունի Գուգարքում։ Իսկ նրա տեղադրությունը Միլի հարթավայրում հաստատում է «Գարգարացւոց դաշտի» ընդունված (նույն վայրում) տեղագրության հշմարտացիությունը։

Գարդարացվոց դաշտի և այժմյան Միլի հարթավայրի նույնությունը կարելի է բխեցնել նաև «Գարգարացւոց» անվանումից։ Վերջինիս հիմքում ընկած է գարգարացիների այն էթնիկական տարրի անվանումը, որով բնակեցված էր ժամանակին Միլի հարթավայրը։ Գարգարացիների գոյության փաստն այստեղ առաջինն արձանագրել է Մովսես Խորենացին։ Հայերի և հարևան ժողովուրդների համար այբուբենների ստեղծման մաշտոցյան գործունեության դրվագներից մեկը (երբ V դ. երրորդ տասնամյակում այցելելով Աղվանք՝ Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է «աղվանական» նշանագրերը) Խորենացին նկարագրում է հետևյալ կերպ. «Եւ ինքն (Մաշտոցը—Ս. Պ.) յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ, որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ ետուն մանկունս ընտիրս։ Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց

---

16 Գուգարքի մյուս իշխող տոհմերը համարվում էին Հայկազն Գուշարի սերունդները։ Դա երևում է Խորենացու հետևյալ տողերից. «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեռն Մթին, որ է Կանգարք, եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զՇոր, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ։ Բայց զտէրութիւնն Աշոցայ, և զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ» (Խորենացի, էջ 113, 114)։

17 Հին հայկական այս նախարարության կրած «Գարգարացւոց» ոչ-հայկական անվանումը չի կարող փաստարկ ծառայել նրան օտար ծագում վերագրելու համար։ Մեր կարծիքով, գա կարելի է բացատրել հետևյալ կերպ։ 72 թ. հայ—«հյուսիսական» ճակատամարտից հետո հայկական զորքերը մի շարք պատժիչ գործողություններ էին իրականացրել Մեծ Հայքի արևելյան ծայրամասերի՝ «հյուսիսականներին» հարած ցեղերի դեմ (Խորենացի, էջ 182—183, Ս. Գ. Պետրոսյան, Փայտակարանը և Պարսպատունիքը մ. թ. I դարի երրորդ քառորդում («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 172—177)։ Այդ ընթացքում վերացվել էին մի քանի, առավել անհնազանդ ցեղերի, ի թիվս դրանց նաև գարգարացիների։ ցեղապետները, իսկ նրանց ֆունկցիաներն անցել Տրդատ Ա-ի (ավանդական Վաղարշակի) կողմից տեղերում նշանակված հայ կողմնակալներին։ «Գարգարացւոց դաշտում» նշանակված կողմնակալը միաժամանակ ստանձնել էր գարգարացիների «ցեղապետի» դերը։ Նրա հաջորդ «ցեղապետ»-կողմնակալները վերածվել էին տեղի ժառանգական կառավարիչների՝ հիմք դնելով «Գարգարացւոց» կոչված հին հայկական նախարարական տոհմին։ Վիճակը նույնն էր բուն Ուտիքում, որտեղի հայ կողմնակալը նաև ուտիների «ցեղապետն» էր։ Նրա սերունդներից՝ Ուտիքի ժառանգական կառավարիչներից, իր ծագումն էր առել «Ուտէացւոց» կոչված հին հայկական նախարարական տոհմը (հմմտ. Խորենացի, էջ 113)։

մանուկն Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուին»[18]։

Ճիշտ է, Խորենացու այս վկայությունը հնարավորություն չի տալիս պարզելու, թե Արևելյան Անդրկովկասի ո՞ր մասում էին բնակվում գարգարացիները, սակայն այստեղ մեզ օգնության է հասնում Կորյունը։ Մաշտոցյան գործունեության նույն դրվագի առնչությամբ նա հաղորդում է, թե ժամանելով Աղվանք՝ Մեսրոպ Մաշտոցը «ի թագաւորական տեղիսն տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատաւք հանդերձ»[19]։ Ուրեմն, գարգարացիները բնակվում էին Աղվանքի արքայանիստ գավառում։ Իսկ 338 թ. հետո այդպիսին էր արդեն Փայտակարան քաղաքի շրջակայքը, որը Սանատրուկ (Սանեսան) Արշակունին, պարսիկների և «հյուսիսականների» օգնությամբ, անջատելով Մեծ Հայքից՝ դարձրել էր աղվանա-մազքութական թագավորների նստավայրը[20]։

Վ. Առաքելյանի կարծիքով, Մեսրոպ Մաշտոցն այս նշանագրերն ստեղծել էր «Աղվանքի թագավորանիստ Կապաղակ քաղաքում»[21]։ Բ. Ուլուբաբյանը այդ նույն գործը կատարված է համարում «ենրանց մայրաքաղաքում (Չողում) թագավոր Արսվաղենի ու եպիսկոպոս Երեմիայի հյուրամեծար հպատակությամբ ու աջակցությամբ»[22]։ Այս կարծիքներն, իրարամերժ լինելով հանդերձ, անընդունելի են հետևյալ պատճառներով։

1. Մեսրոպ Մաշտոցը «աղվանական» նշանագրերն ստեղծելիս, երբ նրա համար հիմք էր ծառայեցրել հենց գարգարացիների (և ոչ թե, ասենք, աղվանա-մազքութական թագավորության բազմաթիվ ցեղերից մեկ ուրիշի) լեզուն, անտարակույս, ամենից առաջ նկատի էր առել այն հանգամանքը, որ սրանք բնակիչներն էին Աղվանքի արքայանիստ գավառի։ Եթե, փաստերին հակառակ, ընդունենք, որ 338 թ. հետո էլ Աղվանքի վարչական կենտրոնը՝ աղվանա-մազքութական թագավորների արքայանիստը, մնում էր Կապաղակը կամ Չողը (երբ այդպիսի դեր ստանձնել էր արդեն Փայտակարանը՝ այժմյան Միլի դաշտում), ապա ստիպված ենք լինելու ընդունել գարգարացիների առկայությունը ոչ թե Փայտակարանի, այլ հիշյալ բնակավայրերի շրջակայքներում՝ «Աշխարհացույցի» Ոստան-ի-մարզպան կամ Չողա գավառներում[23]։ Իսկ քաջ հայտնի է, որ նշված ժամանակաշրջանում ևս դրանք բնակեցված էին ոչ թե գարգարացիների, այլ առաջինը բուն աղվանական (ալբանական), իսկ երկրորդը՝ մազքութա-սարմատական էթնիկական տարրերի կողմից։

Ճիշտ է, գարգարացիներ կային ոչ միայն Միլի հարթավայրում, այլև Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հյուսիսային փեշերին՝ այժմյան Չեչենա-

---

18 Խորենացի, էջ 329։

19 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 70։

20 Խորենացի, էջ 260, 263, «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց», էջ 24—27, նաև՝ Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 75, 88։

21 Մովսես Կաղանկատվացի, էջ 282, ծան. 139։

22 Բ. Ուլուբաբյան, Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը («Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 2, էջ 156)։

23 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 75, 76։

Ինգուշական ԻՍՍՀ տարածքում[24]։ Եթե հյուսիսկովկասյան գարգարացիները ինչ-որ ժամանակ գտնվել են անգամ Աղվանա-մազքութական թագավորության աղդեցության ոլորտում, ապա, միևնույնն է, այս դեպքում ևս նրանց զբաղեցրած տարածքը Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով իրենից բաժանված Աղվանքի վարչական կենտրոնի՝ նրա արքայանիստ գավառի, դերում հանդես դալ չէր կարող։

2. Աղվանա-մազքութական թագավորների նստոց գավառը, որտեղ բնակվում էին գարգարացիները, ցածրադիր մի շրջան էր նույնիսկ Արարատյան և Վրաց դաշտերի համեմատությամբ[25]։ Բնականաբար, այն չէր կարող լինել ոչ Կապաղակի շրջակայքը (Ոստանի-մարզպան), ոչ էլ Ջողա-Մազքութը։ Հայտնի է, որ ինչպես Արարատյան դաշտից, այնպես էլ Վիրքից «գնալ-իջնել» կարելի էր միայն Կուր-Արաքսյան գետախառնուրդի շրջանը (մի դեպքում Արաքսի, մյուսում՝ Կուրի ափերով, և երկու դեպքում էլ նրանց հոսանքներն ի վայր)։ Իսկ Մեսրոպ Մաշտոցը եղել էր վերջինիս այսրարաքսյան և այսրկուրյան մասը բռնող այժմյան Միլի հարթավայրում, քանի որ նա չէր կտրել-անցել Անդրկովեասի այս երկու մեծ գետերից և ոչ մեկը (հակառակ դեպքում, այդ փաստը լռության չէին մատնի Խորենացին և, առավել ևս, Կորյունը)։

Միլի հարթավայրում գարգարացիների երբեմնի գոյությամբ են հենց պայմանավորված «Գուրգարացւոց դաշտ» և «Գարգարացւոց իշխանութիւն» անվանումները, որոնցից առաջինը հնում կրել է հարթավայրը, իսկ երկրորդը՝ այնտեղ գոյություն ունեցած վարչական միավորն ու այն գլխավորած հին հայկական նախարարական տոհմը (ըստ երևույթին, գարգարացիների ցեղանունն է այստեղ պահել նաև Կարկար<*Գարգար գետանունը[26]։ «Գարգարացւոց դաշտ» և «Գարգարացւոց իշխանութիւն» ձևերն աղճատված համարելը, դրանք «Գուգարացւոց դաշտ» և «Գուգարացւոց իշխանութիւն» անվանումնե-

---

[24] Strabo, XI, 5. 1. Е. И. Крупнов, Древняя история Северного Кавказа. М., 1960. стр. 70; В. Б. Виноградов, К. З. Чокаев. Древние свидетельства о названиях и размещении нахских племен («Археологическо-этнографический сборник», Грозный, 1965. стр. 70—78); В. Б. Виноградов. Тайны минувших времен, М., 1966. стр. 117—122; Н. Г. Волкова, Этнонимы и племенные названия Северного Кавказа, М., 1973, стр. 154.

[25] Ըստ Կորյունի Արևմտյան Հայաստանից վերադառնալիս, Մեսրոպ Մաշտոցը Վաղարշապատում հանդիպում է Սահակ կաթողիկոսին ու Արտաշես արքային (422—428 թթ.). «եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից։ Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ ի բազաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն աղատաւք հանդերձ, որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի» (Կորյուն, էջ 70, ընդգծումը մերն է—Ս. Պ.)։ Խորենացին, որը Մաշտոցին Աղվանք է տանում ուղղակի Վրաց աշխարհից, գրում էր. «Եւ ինքն (Մեսրոպ Մաշտոցը—Ս. Պ.) յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նորա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ, որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ ետուն մանկունս ընտիրս» (Խորենացի, էջ 329, ընդգծումը մերն է—Ս. Պ.)։

[26] Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 6—7, Н. Адонц. նշվ. աշխ., էջ 424, Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 46 և «Աշխարհացույց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ, էջ 266, ծան. 51, В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда X—XI веков, М., 1963, стр. 28, пр. 38. Հավանաբար, նախապես Գուրգար է կոչվել այժմյան Կարկար-չայի ստորին հոսանքը միայն։ *Գարգար>Կարկար անցման օգտին են խոսում մի կողմից այս գետի ստորին հոսանքի շրջանում «Գարգարացւոց դաշտի», «Գարգարացւոց իշխանութեան» և «Գարգարացւոց» ցեղի երբեմնի գոյությունը, մյուս կողմից՝ Գարգար և Կարկար անունների հնչյունական նմանությունը։

րով փոխարինելը հանգեցնում է ոչ միայն Միլի հարթավայրում գարգարացիների երբեմնի գոյությունը մերժելուն, այլև նրանց հետ կապված երևույթները Գուգարք փոխադրելուն և գուգարացիներին՝ հին Գուգարքի բնակչությանը, վերագրելուն։

Այսպիսով, անժխտելի իրողություն է Կուր-Արաքսյան գետախառնուրդի շրջանի այսրկուրյան մասում ինչպես «Գարգարացւոց դաշտի», այնպես էլ «Գարգարացւոց իշխանութեան» և «Գարգարացւոց» ցեղի երբեմնի գոյությունը։ Ըստ այսմ, սխալ է այս գարգարացիներին դարձնել գուգարացիներ կամ էլ նույնացնել հյուսիսկովկասյան գարգարացիների հետ՝ հիմք ընդունելով սրանց անվանումների շփոթը[27], որից, բարերախտաբար, զերծ է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական հրատարակությունը։

ЛОКАЛИЗАЦИЯ «ПОЛЯ ГАРГАРЕЙЦЕВ»

САРГИС ПЕТРОСЯН

Резюме

«Поле гаргарейцев» впервые упоминает Мовсес Хоренаци как место битвы между войсками армянского царя Тиридата и «северянами» (т. е. дружинами северокавказских союзных племен). Как известно, это были те «северяне», которые в 72 году н. э., после ограбления Мидии—Атропатены, возвращались на родину. Согласно Иосифу Флавию, в пределах Армении они были вынуждены дать бой преградившим им путь войскам армянского царя Тиридата I (54—80 гг.)—брата атропатенского царя Пакора.

Сопоставляя сообщения Мовсеса Хоренаци и Иосифа Флавия можно заключить, что «поле гаргарейцев» находилось в восточной части Великой Армении, на древней магистральной дороге Ардабил—Дербенд, неподалеку от границ как Атропатены, так и Албании (Кавказской). Именно таково расположение нынешней Мильской равнины, где и следует локализовать «поле гаргарейцев».

Правильность такой локализации вытекает не только из анализа событий 72 г., но и из других сообщений Мовсеса Хоренаци: в одном из них говорится о «княжестве гаргарейцев», в другом—о племене-носителе «языка гаргарейцев». По сведениям, сообщаемым древнеармянскими историками, и «княжество гаргарейцев» и сами гаргарейцы локализуются в нынешней Мильской равнине.

---

27 Թյուրիմացություններից խուսափելու համար, անկախ գործածված անվանաձևից (գուգարացի, թե՞ գարգարացի), հարկավոր է պատմա-աշխարհագրական բնույթի կողմնակի տվյալներով միջոցով պարզել, թե մեր պատմիչների վկայություններից որո՞նք են վերաբերում հայ գուգարացիներին, իսկ որո՞նք հյուսիսկովկասյան գարգարացիներին (այժմյան ինգուշների նախնիներին) կամ նրանց արևելաանդրկովկասյան անվանակիցներին։